



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

*Երևան, Կառավարական տուն 1*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«Նիժֆարմ» ԲԸ հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Աշոտ Այվազյանի  
10.03.2017թ.-ի վարչական բողոքը բավարարելու մասին)

**Ք. ԵՐԵՎԱՆ**

**«14» ապրիլի 2017թ.**

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ ի դեմս հանձնաժողովի նախագահ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 08.12.2016թ. թիվ 338575/03 և ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 03.02.2017թ. թիվ 5/3 որոշումներն անվավեր ճանաչելու վերաբերյալ «Նիժֆարմ» բաժնետիրական ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Աշոտ Այվազյանի 10.03.2017թ.-ի բողոքը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.**

«Նիժֆարմ» բաժնետիրական ընկերության հայաստանյան ներկայացուցչության (այսուհետ նաև՝ Ընկերություն) տնօրեն Աշոտ Այվազյանը (այսուհետ՝ նաև Բողոք բերած անձ) բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի (այսուհետ նաև՝ Վարչության պետ) 08.12.2016թ. թիվ 338575/03 և ՀՀ ԿԱ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ՝

նաև Գանգատարկման հանձնաժողով՝ 03.02.2017թ. թիվ 5/3 որոշումներն (այսուհետ նաև՝ Որոշում) անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 10.03.2017թ.-ին:

Բողոք բերած անձը հայտնել է, որ Ընկերությունը 30.11.2016թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության 3-րդ բաժնի կողմից ստացել է ծանուցում՝ 08.12.2016թ. վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ: Ընկերությունը 05.12.2016թ.-ին գրավոր տեղեկացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչությանը և Մաշտոցի հարկային տեսչությանը, որ Ընկերությունը ոչ մի ներմուծում չի իրականացրել: Սակայն, 08.12.2016թ.-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից ստացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործով թիվ 338575/03 որոշումը, որով Բողոք բերած անձը ենթարկվել է վարչական տուգանքի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

Վարչության պետի որոշումն անվավեր ճանաչելու խնդրանքով Ընկերությունը դիմել է Գանգատարկման հանձնաժողով:

Բողոք բերած անձը նշել է, որ Գանգատարկման հանձնաժողովի նիստին ներկա է եղել Ընկերության գլխավոր հաշվապահ Կարինե Մանուկյանը, ում ներկայացվել է մատակարարի կողմից ուղարկված փաստաթուղթ՝ որպես ապրանքի ստացող «Նիժֆարմ» բաժնետիրական ընկերության հայաստանյան ներկայացուցչության, իսկ որպես կոնտակտային անձ՝ Սերգեյ Քոչինյանի վերաբերյալ նշումով:

Ընկերության ներկայացուցիչը Գանգատարկման հանձնաժողովի նիստի ժամանակ պնդել է, որ առկա է սխալմունք, քանի որ 2016թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում Ընկերությունը ոչ մի ներմուծում չի իրականացրել, իսկ մատակարարման փաստաթղթում նշված Սերգեյ Քոչինյանը որևէ առնչություն Ընկերության հետ չունի:

Չնայած վերոհիշյալ առարկություններին, Գանգատարկման հանձնաժողովը 03.02.2017թ. մերժել է գանգատը:

Բողոք բերած անձը հայտնել է նաև, որ գանգատի մերժումից հետո Ընկերության գլխավոր հաշվապահ Կարինե Մանուկյանը հարցում է իրականացրել առաքման ծառայություններ մատուցող «DHL» կազմակերպության ներկայացուցիչ «Յումաքս» ՍՊԸ-ին և ստացել գրավոր պատասխան, որ 2679700656 համարի

բեռնագրով 18.09.2016թ.-ին եկած փաթեթը հանձնվել է «Նատալի ֆարմ» ՍՊ ընկերությանը՝ Սերգեյ Քոչինյանին: «Յումաքս» ՍՊ ընկերությունը հարցում է արել նաև ուղարկող կողմին և ստացել է պատասխան, որ իրական ստացողը հանդիսանում է «Նատալի ֆարմ» ՍՊ ընկերությունը և ի սկզբանե բեռնագրի վրա նշված կոնտակտային անձ Սերգեյ Քոչինյանը հանդիսանում է «Նատալի ֆարմ» ՍՊ ընկերության աշխատակիցը:

Վերոգրյալի հիման վրա Բողոք բերած անձը խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 08.12.2016թ. թիվ 338575/03 որոշումը և ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 03.02.2017թ. թիվ 5/3 որոշումը:

## **2. Մասնակցի դիրքորոշումը.**

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի ապրիլի 14-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր Ընկերության տնօրեն Աշոտ Այվազյանը և ներկայացուցիչ Կարինե Մանուկյանը:

Վերջիններս լսումների ընթացքում որևէ նոր փաստարկ կամ փաստաթուղթ չներկայացրեցին և պնդեցին բողոքով ներկայացրած դիրքորոշումը:

## **3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն դիմումի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

3.1. ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 08.12.2016թ. կայացվել է թիվ 338575/03 որոշումը, համաձայն որի. «Նիժֆարմ» բաժնետիրական ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Աշոտ Այվազյանը «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել 2016թ.-ի սեպտեմբեր ամսվա ներմուծման հարկային հայտարարագիրը: Նկատի

ունենալով, որ արարքը նախատեսված է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169<sup>1</sup> հոդվածի 2-րդ մասով, ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244<sup>2</sup>, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասով, որոշվեց Աշոտ Այվազյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20.000 դրամի չափով:

3.2. Ընկերությունը 22.12.2016թ. գանգատ է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողով՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 08.12.2016թ. թիվ 338575/03 որոշումը:

3.3. Գանգատարկման հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված գանգատի քննության արդյունքում 2017թ. փետրվարի 3-ին կայացրել է թիվ 5/3 որոշումը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 08.12.2016թ. թիվ 338575/03 որոշումն անփոփոխ թողնելու գանգատը մերժելու մասին: Որոշմամբ, մասնավորապես, նշվել է, որ «Սույն գործում առկա են 16.09.2016թ. «Նիժֆարմ» ԲԸ հայաստանյան ներկայացուցչության կողմից ԵՏՄ երկրներից ՀՀ փարածք ներմուծված բեռի ուղեկցող փաստաթղթերի լուսապատճենները: Մասնավորապես, համաձայն գործում առկա հաշիվ-պրաֆորմայի «Նիժֆարմ» ԲԸ մայր գործարանի կողմից (հասցե՝ ՌԴ, ք. Նիժնի Նովգորոդ) «Նիժֆարմ» ԲԸ հայաստանյան ներկայացուցչությանն է ուղարկվել 6 կիլոգրամ քաշով բեռ, որի արժեքը կազմել է 20 ԱՄՆ դոլար: Նշված բեռը ՀՀ փարածք է ներմուծվել «Յումաքս» ՍՊԸ կողմից 18.09.2016թ. և հանձնվել է հասցեատիրոջը: Այսինքն, գանգատում բերված պնդումները, որ «Նիժֆարմ» ԲԸ հայաստանյան ներկայացուցչությունը 2016թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում որևէ ներմուծում չի իրականացրել, չեն համապատասխանում իրականությանը:

«Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ներմուծվող ապրանքների համար հաշվարկված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարները (բացառությամբ ակցիզային դրոշմանիշներով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկի գումարների) Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև

ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք փաստացի ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ»:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անուղղակի հարկերի մասին» արձանագրության 20-րդ կետի կիրառության իմաստով ապրանքների ներմուծման դեպքում հարկ վճարողը պարտավոր է սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետներում իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել միայն հետևյալ փաստաթղթերը.

1) ներմուծողի լրացրած՝ ներմուծման հարկային հայտարարագիրը. »:

Քննարկվող դեպքում «Նիժֆարմ» ԲԸ հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Աշոտ Այվազյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել 2016թ. սեպտեմբեր ամսին «Նիժֆարմ» ԲԸ հայաստանյան ներկայացուցչության կողմից ԵՏՄ երկրներից ՀՀ տարածք ներմուծված ապրանքի համար սահմանված ժամկետում ներմուծման հարկային հայտարարագիրը չներկայացնելու համար: Այսինքն, Աշոտ Այվազյանի կողմից թույլ է տրվել զանցանք, որի համար նախատեսված է պատասխանատվություն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթով»:

3.4. Բողոք բերած անձի կողմից Հանձնաժողով է ներկայացվել Ընկերության գլխավոր հաշվապահ Կարինե Մանուկյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետին և ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության պետին 05.12.2016թ. հասցեագրված գրություններ, որոնցով Կարինե Մանուկյանը հայտնել է, որ «Նիժֆարմ» ԲԸ հայաստանյան ներկայացուցչությունը 2016թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում ոչ մի ներմուծում չի կատարել, ուստի և չի ներկայացրել ներմուծման հարկային հայտարարագիր և հարկերի վճարման վերաբերյալ հայտարարություն:

3.5. Համաձայն 19.09.2016թ. Ընկերության կողմից ԵՏՄ երկրներից ՀՀ տարածք ներմուծված բեռի նախահաշվի՝ «Նիժֆարմ» ԲԸ կողմից ուղարկվել է 6 կգ քաշով բեռ: Որպես ստացող կազմակերպություն նշված է՝ «Նիժֆարմ» ԲԸ ներկայացուցչություն, իսկ որպես ստացող անձ՝ Սերգեյ Քոչինյան, հասցե՝ ք. Երևան, Տիչինայի փողոց, 3-րդ նրբ., թիվ 2/2:

3.6. «Յումաքս» ՍՊԸ-ի տնօրենը 01.03.2017թ. գրությամբ՝ ուղղված «Նիժֆարմ» ԲԸ ներկայացուցչությանը, հայտնել է, որ 2679700656 համարի բեռնագրով 18.09.2016թ.-ին եկած փաթեթը առաքվել է ավիաբեռնագրի վրա նշված հասցեով և համապատասխանաբար հանձնվել է որպես կոնտակտային անձ նշված Սերգեյ Քոչինյանին: Ըստ նշված գրության, «Յումաքս» ՍՊ ընկերությունը հարցում է արել նաև ուղարկող կողմին և ստացել է պատասխան, որ իրական ստացողը հանդիսանում է «Նատալի ֆարմ» ՍՊ ընկերությունը և ի սկզբանե բեռնագրի վրա նշված կոնտակտային անձ Սերգեյ Քոչինյանը հանդիսանում է «Նատալի ֆարմ» ՍՊ ընկերության աշխատակիցը:

3.7. Բողոք բերած անձի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերում առկա է նաև «Нижегородский химико-фармацевтический завод» բաժնետիրական ընկերության 28.02.2017թ. թիվ 09-2-15/03 գրությամբ կատարված հավաստումն առ այն, որ 2679700656 համարի բեռնագրում նշված ապրանքը նախատեսված է եղել «Նատալի ֆարմ» ՍՊ ընկերության համար, իսկ որպես կոնտակտային անձ նշված է այդ ընկերության աշխատակիցը:

#### **4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.**

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ **բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման** հետևյալ հիմնավորմամբ.

Գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ ինչպես ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչությանը, այնպես էլ Գանգատարկման հանձնաժողովին Բողոք բերած անձի կողմից ներկայացվել է առարկություն՝ Ընկերության կողմից ապրանք ստացած չլինելու, ինչպես նաև Սերգեյ Քոչինյան անվամբ աշխատակից չունենալու վերաբերյալ, որի հավաստիությունը պարզելու ուղղությամբ վերոհիշյալ վարչական մարմինների կողմից պատշաճ գործողություններ չեն ձեռնարկվել:

Մինչդեռ, ինչպես ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչությունը, այնպես էլ Գանգատարկման հանձնաժողովը պարտավոր էին

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջին համահունչ, ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ Բողոք բերած անձի կողմից ներկայացված փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու ուղղությամբ, որի անմիջական նպատակը գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակցի օգտին առկա հանգամանքների բացահայտումն է:

Նշված առնչությամբ, հաշվի առնելով Բողոք բերած անձի կողմից Հանձնաժողովին ներկայացված «Յումաքս» ՍՊԸ-ի տնօրենի 01.03.2017թ. և «Нижегородский химико-фармацевтический завод» բաժնետիրական ընկերության 28.02.2017թ. թիվ 09-2-15/03 գրությունները, Հանձնաժողովը գտնում է, որ ինչպես ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության, այնպես էլ Գանգատարկման հանձնաժողովի որոշումները հիմնված են եղել կեղծ (*նշված եզրույթի կիրառումը չի ենթադրում տեղեկատվությունը դիտարկությամբ խեղաթյուրելու կամ օգտագործելու փաստի հաստատում, և ընդգծում է տեղեկատվության անհամապատասխանությունն իրական փաստերին*) տեղեկատվության վրա, որպիսի հանգամանքն արդեն իսկ բավարար է նշված որոշումները «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով անվավեր ճանաչելու համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով սահմանված պահանջի խախտումն իր հերթին հանգեցրել է օրենքի սխալ կիրառմանը, հետևաբար առկա է նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 08.12.2016թ. թիվ 338575/03 և Գանգատարկման հանձնաժողովի 03.02.2017թ. թիվ 5/3 որոշումներն անվավեր ճանաչելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված հիմքը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմք են հանդիսանում նույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, **1-ին մասի «ա» կետի պահանջներով՝**

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Նիժֆարմ» բաժնետիրական ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Աշոտ Այվազյանի 10.03.2017թ.-ի բողոքը **բավարարել**, անվավեր ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի 03.02.2017թ. թիվ 5/3 որոշումը և կայացնել նոր վարչական ակտ՝ հետևյալ բովանդակությամբ. «Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 08.12.2016թ. թիվ 338575/03 որոշումը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ